

«ՀԱՄԱՏԵՂ ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Ամփոփաթերթում ներառվում են նախագծի վերաբերյալ ներկայացված բոլոր բովանդակային առաջարկությունները, առցանց գրվածները՝ 2 աշխատանքային օրվա, էլ. փոստով ուղարկվածները՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում

h/h	Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Armine Anda 29.06.2023 21:11:39	Առաջարկ 1. - Հոդված 1, կետ 7, 1, Օտարալեզու փաստաթղթերի պաշտոնական թարգմանությունների պահանջի վերաբերյալ. ՀԱՄԱՏԵՂ ՖԻԼՄԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ Կառավարության որոշումից դուրս բերել պաշտոնական թարգմանությունների պահանջը: Առաջարկ 1-ի հիմնավորում. Պաշտոնական թարգմանության պահանջը ծանրաբեռնում է ֆիլմարտադրողին թե ֆինանսական և թե ժամանակի ռեսուրսների	Չի ընդունվել Հիմք ընդունելով «Լեզվի մասին» ՀՀ օրենքը պարտադիր ենք համարում օտարալեզու փաստաթղթերի թարգմանությունները:	

ներդրմամբ: Ֆիլմարտադրողը
 իրավական անձ է և սխալ
 թարգմանությունն ներկայացնելու
 համար պատասխանատու է օրենքի
 առաջ: Զանի որ պաշտոնական
 թարգմանությունները անվճար չեն,
 Ազգային ֆիլմի, համատեղ
 արտադրության կարգավիճակների
 համար փստաթղթերի պաշտոնական
 թարգմանությունների համար,
 Ֆիլմարտադրողն առանձին
 դրամաշնորհի կարիք կունենա:
 Համատեղ արտադրության մեջ
 հաջողված ֆիլմարտադրողների
 հաջողության գաղտնիքը նաև
 լեզուներին տրիրապետելն է, և դրա
 համար առանձին ռեսուրսների կարիք
 չունենալը: Միջազգային
 փաստաթղթերը ֆիլմարտադրողների
 միջև ստորագրվում են առանց
 պաշտոնական թարգմանությունների:
 Եվ պետության համար իր սեփական
 ֆիլմարտադրողի հանդեպ
 անվստահությունն է միայն դառնում
 այսպիսի ավելորդ
 ծանրաբեռնվածության պատճառ:
 Ստացվում է նաև, որ միջազգային
 գործընկերները ավելի են վստահում
 ՀՀ իրավական անձերին, քան ՀՀ
 պետական կառույցները: Խախտվում
 է նաև Դրամաշնորհի մասին օրենքի՝
 աջակցություն ստացողին
 չծանրաբեռնելու դրույթը: ՀՀ
 կինեմատոգրաֆիայի օրենքի ամբողջ
 նշանակությունը կինոարտադրության
 զարգացումն է՝ կինոարտադրողի
 համար բարենպատ պայմաններ

		<p>ստեղծելով ոչ թե հակառակը: Արմինե Անդա Պրոդյուսեր, Ռեժիսոր, Սցենարիստ, Դերասանուհի Հոշկի Ֆիլմ սպը-ի հիմնադիր ՀՀ Կինեմատոգրաֆիայի օրենքի Նախաձեռնող armineaa@yahoo.com, hoshkeefilm@gmail.com 37491505266hoshkeefilm@gmail.com 37491505266</p>		
--	--	---	--	--